

ԵՐԵՎԱՆԻ ԳՐԻԳՈՐ ՏԱՐԻ

ՄՇԿԿ

Տպարանը գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլ. Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրության մէջ.

Իմ Կոպիւն. Тифлис. Редакция «Мшак».

Կամ Yutis, Rédaction «Mschak».

Տէլ. 4 35 № 258.

Միջազգային թիւը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ տօն օրերից).

Կայտարարութիւնը ընդունվում է ամէն յետմիջ.

Յետադարձութիւնները համար գնալու համար են.

Եւ յետմիջազգային տարածակցին 10 կոպէկ.

Տէլ. 4 35 № 258.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԵՎՈՒՆԻ

Էփէմիա Սարգսեան ինքնահրկէս եւ որդիքը յայտնում են իրանց ազգականներին եւ ծանօթներին իրանց անուանալի ազգական

ԳԱՐԻԻԷԼ ԶՈՒՐԱՐԵԱՆ ՄԻՐԶՈՅԵԱՆՑԻ

մահը, որ տեղի ունեցաւ կիրակի, նոյեմբերի 10-ին:

Անժամանակ վախճանված

ԳԱՐԻԻԷԼ ԶՈՒՐԱՐԵԱՆ ՄԻՐԶՈՅԵԱՆՑԻ

Թաղումը տեղի կունենայ կիրակի, նոյեմբերի 17-ին, որի մասին վաղար մայրը, Նինա Բամանովնա Միրզոյեանց, որդիների հետ՝ յայտարարում են ազգականներին եւ ծանօթներին: Յուզարկաւորութիւնը կը սկսվի ժամի 10-ին հանգուցեայի բնակարանից (Սերգիեյովայա փողոց, սեփական տուն) դէպի Սուրբ-Նշան եկեղեցի: Թաղումը տեղի կունենայ Վերայի գերեզմանատանը: Հոգեհանգիստը նոյեմբերի 16-ին, երեկոյան 7 ժամին:

1—2

ԲՈՎԱՆԴԱՎՈՒԹԻՒՆ

Դարձեալ ընկերակցութիւնների մասին. — Ներքին Տնտեսութիւն. Հ. Յակոբոս վ. Իսա-վերդեան. Մի թիւրիմացութիւն. Նամակ Եկա-տերինօպոլից. Ներքին լուրեր. — ԱՐՏԱԳԻՆ Տն-ՍՈՒԹԻՒՆ. Կ. Գոյի լուրերից. Նամակ Գարսեանցից. Արտաքին լուրեր. — ՀՅԻԱ-ԳԻՐԵՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ԴԱՐՁԵԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մենք համարումքամբ վերաբերվելիքը դէպի այն երևոյթը, որ Բագումը կազմ-վում էին ընկերակցութիւններ արդիւնա-գործական նպատակով: Բայց զգուշացնում էինք ձեռնարկողներին բոսային խաղերից և նեղ շահագրտական ոտնձգութիւննե-րից, որոնք երևան եկան ընկերակցու-թիւնների կազմութեան հէնց առաջին քայլերում և վնասեցին ընկերակցութիւն-ների մի մասի գործերին: Մենք ցանկա-նում էինք, որ ընկերակցութիւններ կազ-մակերպելու գաղափարը պատշաճօրէն մեր երկրում և կամայ-կամաց տարածվելով երկրում՝ հիմք ընէ և մեր գիւղատնտե-սական աշխարհում:

Նախապիս գործի մէջ ընկերակցու-թիւնները շուտ էին կազմվում և շատ շուտ ցոյց տալիս իրանց գործունէութեան արդիւնքը: Անկասկած, աւելի դժուար է արդիւնքի ընկերակցութիւնների կազմելը, որոնք աչքի առաջ ունեն մեր երկրի միւս հում նիւթերի մշակումը և նրանց վաճա-րահանութիւնը, որոնք զեռ չեն ստացել արդիւնքի խոշոր և համաշխարհային նշա-նակութիւն, ինչպէս նաւթը: Բայց այդ միւս արդիւնքագործութիւնները մեծ կա-րեւորութիւն ունեն երկրի տնտեսութեան համար, որովհետեւ նրանց միջոցով ար-դիւնքերական կեանք է ստեղծվում երկ-րի զանազան մասերում, հեռաւոր ան-կիւններում, նաւթը, անկասկած, մի խո-շոր հարստութիւն է մեր երկրում, բայց նա կենտրոնացած է մի քանի կենտրոնում, որտեղ կազմվել է քաղաքի կեանք և գոր-ծարանավարական միջնորդութիւնը: Իսկ երբ մեր երկրի գիւղատնտեսական և հանքա-բանական միւս հարստութիւնները կը սկսեն շահագործվել, կը կազմվեն հողա-գործական, անտառաբուծական, շերամա-պահական, մեղուաբուծական, կաթնա-տնտեսական, այգեգործական և ուրիշ ըն-կերակցութիւններ՝ այն ժամանակ նրանք կենդանութիւն կը տան գաւառի կեան-քին և առաջ կը բերեն արդիւնքերական շարժումներ, որոնք թէ՛ աշխատանքի նոր աղբիւրներ կը բանան ազգաբնակչութեան համար, թէ՛ սկիզբ կը դնեն մի շարք կա-տարելագործութիւնների տեղական ար-հեստի մէջ և թէ՛ հերթական կը դար-

ձնեն կուլտուրական զանազան ձեռնարկու-թիւնների իրագործումը գաւառի մէջ:

Մենք նորից հրաւիրում ենք մեր ըն-թերցողներին ուշադրութիւնը դէպի ընկե-րակցութիւնների կազմելու գործը, յիշե-ցնելով, որ վարչական բարձր շրջանները իրանց կողմից ոչ միայն բարեհաճ աչքով են նայում ընկերակցութիւնների կազմա-կերպութեան, այլ և ցանկութիւն են յայտնում, որ այդ գործի համար առաջ զան եռանդոտ աշակերդներ և աշխատող-ներ:

ՆԵՐՔԻՆ ՏՆՈՒԹԻՒՆ

Հ. ՅԱԿՈԲՈՍ Վ. ԻՍԱՎԵՐԴԵԱՆ

Վենետիկի Միջերկրական Միաբանութիւնը նո-րից զրկվելով մի արդիւնաւոր եւ գրականագի-տական, որը թէ՛ և այնքան էլ ծանօթ էր հայ ազգին, բայց լաւ ճանաչված էր եւրոպա-կան գիտնական աշխարհից, որովհետեւ նրա ամբողջ գործունէութիւնը նուիրված էր՝ հայ ազգը Եւրոպային ծանօթացնելու գործին:

Հ. Յակոբոս Իսաւերդեան, ինչպէս կարող է ներգրավվել նոյնմանի համարում, ծնւ-վել է Զմիւռնիայում, 1835-ին, ուրեմն նա մեռաւ 67 տարեկան հասակում: Նա Դեռնոյ Ալիշանի աշակերտ էր եւ քանանայ ձեռնարկ-վեց 1854-ին: Նա ըստ ծանօթ էր անգլիերէնին, լատինիէնին, իտալերէնին եւ ֆրանսիերէնին եւ ունէր Եւրոպայի մէջ բարեկամներ մի լայն շրջան, բաղկացած նոյն-իսկ իշխանագունե-րից եւ ամերիկացի միլիտանտներից, որոնց հետ նա միշտ թղթակցում էր, ծանօթացնելով նրանց հայ գրականութեան եւ պատմութեան հետ: Աւելի ընդարձակելով իր գործը եւ որ-պէս զի կարողանայ Եւրոպային ծանօթացնել հայ ազգի հետ, նա գրեց ֆրանսիերէն չափա-պատմութիւնը պատկերազարդ, որի առա-գրութեան ծախքը յանձն առաւ հնդկաստանցի մի հայ վաճառական Ապա Նա հրատարակեց Անվաւեր երկ անգլիերէն թարգմանութիւ-նը, որոնցով հետաքրքրվում էին շատ անգլիա-ցի եւ ամերիկացի գրաւորներ: Այդ թարգմա-նութիւնը այնքան լաւ էր կատարված, որ անգլիացի հայագէտ Գոնիքերը, Անվաւեր երկ անգլիերէնը՝ հաւատարմաւ Աստուա-ծաշնչի եւ Միլտոնի անգլիերէնին: Նա կատա-րեց նոյնպէս Ալիշանի Միտանի ֆրանսիերէն թարգմանութիւնը, ինչպէս եւ թարգմանեց երեք լեզուով՝ շաւի պատարագը, անգլիերէն ֆրանսիերէն, իտալերէն: Թողել է անգլիերէն լեզուով նաեւ հետեւեալ աշխատութիւնները: 1) Գրական պատմութիւն Հայաստանի, 2) Գա-ղաքական պատմութիւն Հայաստանի, 3) Եկե-ղեցական պատմութիւն Հայաստանի եւ ուրիշ մանր գրութեան: Վերաբերելի հայ պատմու-թեան եւ գրականութեան հարմար ընդ նաեւ երկու հատոր անգլիերէն թարգմանութիւն, որ

արդէն տպված է եւ համարվում է ամենալա-ւերականութիւններից միւրը:

Երկար ժամանակ նա եղել է եւ «Բազմալե-պի» խմբագրատեղ. իսկ 1870-ին ֆրանսիա-պու-սական պատերազմի ժամանակ նա կազմեց այդ պատերազմի նկարագրութիւնը, որ հրա-տարակվում էր ամերիկաներով Սակայն նրա ամենագլխաւոր աշխատութիւնն է «Անվաւե-ր երկ»-ի Պատմութիւնը անունով վէպը, որ վաղ գոյնեցրով նկարագրում է Հնդկաստանի բարբեր, սովորութիւնները եւ հրաշալի ճո-խութիւնները ու բնութեան գեղեցկութիւն-ները եւ երեւի կազմված է լորդ Լիտտոնի հա-մանուն գրքի նմանությամբ, ըստի որ նոյն անունն է կրում:

Մեր անկեղծ հաւակցութիւնն ենք յայտնում Միջերկրական միաբանութեան արդիւնաւէտ ազգային եւ գրական գործիչի վաւախ մահվան առիթով:

Մի թիւրիմացութիւն

Ամեն անգամ, երբ մեզանում անհատական կամ կոլեկտիվ ջանքերով ներկայացումներ են կազմակերպվել մայրենի լեզուով, միշտ նիւ-թական դժուարութիւններ են առաջ եկել եւ հէնց գործի սկզբից խոշոր գեֆիցիտը մասնա-գործիւն է պատճառել ձեռնդրեցներին: Այս հանգամանքը շատերին առիթ է տալիս կար-ծելու, որ մայրենի բեմը մեզանում մի արուես-տական երևոյթ է, որ պահվում է անհատ-ների ջանքերով եւ կամով, որ նա զուրկ է կենսունակութիւնից, որովհետեւ հաստատուն հիմունքներ չունի: Այստեղ մի խոշոր թիւրի-մացութիւն կայ, որ մեր կարծիքով անհրա-մեշտ է պարզել:

Ճշմարիտ է, որ հայկական թատրոնը համա-րեաւ միշտ գեֆիցիտ է տուել, ճշմարիտ է նաեւ, որ հայ հասարակութեան նիւթալէս կարող է առաջաւոր համարվող մասը տարա-բախտաբար անտարբեր է եղել եւ դէպի մայ-րենի բեմը, ինչպէս եւ անտարբեր է դէպի ամեն ինչ, որ մի քիչ պարզաբան կանէր նրան, մի քիչ փալ կը տար նրա անփառանակ կեան-քին: Բայց դրանով հանդերձ դժուար է այս երկու երեւոյթների մէջ պատճառի եւ հետե-ւանքի կապ գտնել: Դժուար է բացատրակա-պէս պնդել, թէ գեֆիցիտ է լինում մի միայն նրա հաւաք, որ թատրոնը լաւ չէ յաճախվում, եւ այստեղից էլ հանել այն թեթեւաբան եզ-րակացութիւնը՝ թէ հայ բեմը մի արուեստա-կան երեւոյթ է: Բանն այն է, որ եթէ թատ-րոնն ամեն անգամ ծայրէ ի ծայր լինէր, եթէ ըստ մեզ գոյութիւնը յանկարծակի հա-կանային մայրենի բեմի եւ մայրենի լեզուի մեծ քաղաքակրթական, բարոյական նշանա-կութիւնը՝ այնու ամենայնիւ որեւէ գեֆի-ցիտ կարող էր դարձեալ լինել եւ ահա թէ ինչու:

Թատրոնը, ինչպէս եւ կրթական բոլոր հաս-տատութիւնները ըստ էութեան այնպիսի հիմ-նարկութիւններ են, որ ոչ միայն նրանց հետ որ եւ նիւթական շահի գաղափար, անկա-յութիւն կազմված լինել չէ կարող, հապա ան-դարձ նիւթական զոհողութիւնները, անվերջ ծախսերը նրանց նպատակի աւելի լայն չափե-րով իրագործման համար անհրաժեշտ եւ հզօր գործոն են: Թատրոնի ինչպէս եւ կրթական հաս-տատութիւնների տուած անմիջական շահը բա-ցառապէս բարոյական, մտաւոր է, եւ ոչ նիւ-թական: Այսպէս է եղել բոլոր քաղաքակրթ-երկրներում հին ժամանակներում, այսպէս է եւ այժմ: Յայտնի է, որ դասական Աթէնքում հանրապետութիւնն ինքն էր պահպանում թա-րոնները պետական հաշուով, եւ ժողովուրդն առանց խտրութեան լայն հնարաւորութիւն ու-նէր ձրիապէս տեսնել Սօֆոկլէսի, Եւրիպիդէսի, Արիստոփանի օտեղծագործութիւնները բեմի վրա: Նոյն բանն էր Հռոմում, այնտեղ էլ թատ-րոնի կազմակերպութիւնն ու պահպանութիւնը պետական առաջնակարգ պարտաւորութիւնն էր: Իսկ կայսերութեան շրջանում բանն

այնքան ծայրայեղութեան հասաւ, որ շատ ան-գամ առանձին անհատներ, դժմագոյներ, զօրա-վարներ, գահի թեկնածուներ եւ կայսրեր ի-րանց վրա էին վերցնում մեծամեծ կրկնների եւ թատրոնների ծախքերը ժողովրդին գրաւե-լու համար: Ժիւլիենալի յայտնի ասացումը՝ «Panem et circenses» — «Հաց եւ ներկայացում-ներ» — խիստ ընտրող է այդ ժամանակի Հռոմում: Թատրոնի մասին տիրող հայեացքը բացատրե-լու համար Մի խոսքով՝ հին աշխարհում թատ-րոնը ժողովուրդը չէր պահում, նրա անմիջա-կան հոգեւորից դուրս էր:

Աւելի նոր ժամանակներում միեւնոյն ե-րեւոյթը կրկնվում է միայն այլ ձեւով. այս-պէս՝ Պարիզի բոլոր մեծ թատրոնները — Opéra, Comédie française կարծեմ Odéon եւ ուրիշ-ները, իրանց գոյութիւնը պահպանելու համար պետութիւնից նպաստ են ստանում, չէ նայե-լով՝ որ այդ թատրոններում տուած ձեռք բե-րելու համար գրեթէ միշտ պէտք է լինում «պոչ անել» (faire queue), այսինքն ժամերով ոտքի վրա դռանն սպասել հերթի ուրիշ հա-րկաւորների հետ:

Եզրակացութիւնը պարզ է. բոլոր ժամանակ-ներում եւ բոլոր երկրներում թատրոնները պահվել են պետութեան նիւթական առանձին զոհարարութիւններով: Ինչպէս կրթական հիմ-նարկութիւններ, եւ կարելի է ասել՝ յաճախող-ները շատ լինեն թէ՛ քիչ, այդ միեւնոյն է, թատրոնը, եթէ նո թագաւորապէս յոյսը դրել է յաճախողների վրա՝ անպատճառ գեֆիցիտ կա-նէ, ինչպէս եւ համալսարանը՝ եթէ նա պահվի միեւնոյն ուսանողների վճարով: Վնաս չեն կրի միմիայն՝ այն կաֆէ-շտանայինները, զաւառ մուտ-քով զուարճութեան տեղերը, ուր յաճախողը պարտաւոր է «սի բան խմել» կամ «սի բան ուտել»: Բացարձակ կարելի է ասել, որ լաւ թատրոնի համար կողմնակի նպաստը նոյնքան անհրաժեշտ է՝ որքան համալսարանի համար: Երբեք տեւ, ինչպէս ասացինք, այդ երկու հաս-տատութիւնների նպատակը նիւթական չէ, այլ գեղարուեստն ու գիտութիւնը, եւ էվոլյու-ցիան արամբարանօրէն նրանց մղում է դէպի վերջնական ժողովրդականացումը, դէպի մի վիճակ, երբ երկուսն էլ կը լինեն անվճար, ինչ-պէս հին՝ դասական ժամանակներում:

Ներկայումս, ինչպէս յայտնի է, հայոց դրա-մատիկան ընկերութեան ներկայացումները անվերջ գեֆիցիտ են տալիս. բայց դա մի վե-րին աստիճանի աննպաստ եւ տխուր հանգա-մանք է, որից չէ կարելի ազատվել միմիայն յաճախողների բազմութիւնով: Ճշմարիտ է, եթէ ներկայացումները լաւ յաճախվեն, եթէ դահլիճն ամեն անգամ լի լինէր, երեւոյթը թէ՛ բարոյապէս եւ թէ՛ նիւթապէս խիստ միջերկ-րական կը լինէր, գեֆիցիտն էլ կը նուազէր գոյցէ: Բայց դա դարձեալ խիստ կարճ ժամա-նակով, որովհետեւ լաւ յաճախված եւ պահանջ դարձած թատրոնից անմիջապէս նորանոր պա-հանջներ կանգնեն, պէտք կը զգացվէր, օրինակ, հուման աւելի մեծ եւ աւելի կարող դարձնել, ընկերակցական աւելի հարուստ եւ ներկայա-ցումներն աւելի բազմաթիւ անել, եւ ահա նոր ծախսեր, ահա կրկին գեֆիցիտ:

Ուր է դարմանը, ինչ պէտք է անել, ինչ-պէս պիտի մեղանում ապահովել թատրոնը, որ տա յաճախողների քանակագոյնների հետ կապ-ված անանկալիքներից ազատ լինել: Միայն մի որոշ սուբսիդիայով, ինչպէս տեսնեմք՝ սխալ է ասել, թէ թատրոնը պիտի պահվի ժողովրդա-կան կապէկներով, սխալ է կարծել, թէ ժողո-րդը, ամբողջ մենակ կարող է թատրոն պահել, ոչ մի երկրում այդպէս չէ եղել եւ չէ կարող լինել:

Որովհետեւ հայկական բեմը պետական չէ, այլ մասնաւոր-հասարակական, ուստի բնական է, որ պէտք եղած տարեկան սուբսիդիան պէտք է ծանրանայ նոյն հասարակութեան գիտակցա-կան կարող մասի վրա: Միանուազ, խոշոր նուիրաւորութիւններ, որոնցով միանգամից ա-պահովում էր թատրոնական գործը, մինչեւ այժմ դեռ չկան, սպասել, որ հայ դրամատե-

